ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2022 թվականի N 1180 - Ն

ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ը ապահովել «e-disability» էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքի մշակումը և համակարգի նախագծումը, իսկ մինչև 2023 թվականի հունվարի 10-ը՝ դրա փորձնական կիրարկումը և ներդրումը:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարին՝ մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը ապահովել անհրաժեշտ պայմանները՝ անձի ֆունկցիոնալության գնահատմանն առնչվող ամբողջ փաստաթղթաշրջանառությունն էլեկտրոնային եղանակով իրականացնելու համար:

4. Սահմանել, որ անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է:

5. Սահմանել, որ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու դիմում ներկայացրած, սակայն դեռևս փորձաքննություն չանցած անձանց դիմումի նկատմամբ տարածվում է սույն որոշմամբ սահմանված կարգը՝ բացառությամբ անձի ֆունկցիոնալության գնահատման ուղեգրի: Վերջինիս փոխարեն տեղեկատվական համակարգում կցվում է բժշկասոցիալական փորձաքննության ուղեգիրը:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 276-Ն, 2015 թվականի նոյեմբերի 12-ի «Միասնական սոցիալական ծառայության կողմից իրականացվող փորձաքննություններին հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» N 1318-Ն, 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Միասնական սոցիալական ծառայությունների կողմից իրականացվող փորձաքննություններին փորձաքննություն անցնող անձանց կողմից իրենց ընտրած բուժող բժիշկներին կամ այլ բժիշկ մասնագետներին որպես ներկայացուցիչ ներգրավելու կարգը հաստատելու մասին» N 1527-Ն որոշումները:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի փետրվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան

29.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ